ՀԱՄԱՏԵՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ.ք.Երևան **04.10.2017թ**

<<Կապիտալ Մոթորս>> ՍՊԸ-ն,(այսուհետ՝ Գործընկեր-1), ի դեմս ընկերության տնօրեն Գ.Նուրիջանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա,մի կողմից,և <<ԴԱՎԱՆ ԳՐՈՒՓ>> ՍՊԸ-ն,(այսուհետ՝Գործընկեր-2), ի դեմս ընկերության տնօրեն Ա.Հայրապետյանի,որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա,մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1.Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Կողմերը պարտավորվում են միացնել իրենց ավանդները և առանց իրավաբանական անձ կազմավորելու գործել համատեղ՝ շահույթ ստանալու համար՝մասնակցելով՝ ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից սեղան թափքով մեքենաների ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀԿԱ-ԳՀԱՊՁԲ-17/38 ծածկագրով գնման ընթացակարգին(այսուհետ Ընթացակարգ)և Ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքվելու դեպքում դրա շրջանակներում իրականացնել սեղան թափքով մեքենաների մատակարարում:

1.2.Կողմերը պարտավորվում են ներդնել Ընթացակարգի շրջանակներում հրավերով նախատեսված հետևյալ ավանդները.

1.2.1Գործընկեր-1

Սեղան թափքով մեքենաների մատակարարում, Տեխնիկական սպասարկում ,երաշխիքային սպասարկում,հայտի ապահովման ներկայացում, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ և աշխատանքային ռեսուրսներ չափորոշիչների ապահովում

1.2.2. Գործընկեր-2

Ֆինանսական միջոցներ չափորոշիչի ապահովում և պայմանագրի ապահովման ներկայացում

2.Ընդհանուր գործերը վարելը

2.1.Սույն պայմանագրով իրականացվող գործունեության ընդհանուր գործերը վարելը, ինչպես նաև գնման ընթացակարգին հայտ ներկայացնելը և դրան առնչվող փաստաթղթերի ստորագրելը կատարում է Գործընկեր1-ը :

2.2.Կողմերից յուրաքանչյուրը,անկախ այն բանից,լիազորված է վարել սույն պայմանագրով ընդհանուր գործերը,թե ոչ, իրավունք ունի ծանոթանալ համատեղ գործունեության վերաբերող բոլոր փաստաթղթերին և ստանալ այդ գործունեության մասին ցանկացած այլ տեղեկատվություն:

3.Շահույթի բաշխումը

3.1.Կողմերի համատեղ գործունեության արդյունքում ստացված շահույթը բաշխվում է հետևյալ ձևով՝ Գործընկեր-1 100%:

4.Կողմերի պատասխանատվությունն ընդհանուր պարտավորությունների համար

4.1.Սույն պայմանագրով Կողմերից յուրաքանչյուրն ընդհանուր պայմանագրային պարտավորությունների համար համապարտ պատասխանատվություն է կրում իր ամբողջ գույքով՝անկախ դրանց հիմքից:

5.Պայմանագրի գործունեության ժամկետը և լուծարելու կարգը

5.1.Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է անժամկետ:

5.2 Սույն պայմանագիրը դադարեցնել ցանկացող Կողմը պետք է այդ մասին գրավոր հայտնի մյուս Կողմին՝դուրս գալու օրվանից ոչ ուշ,քան 3 ամիս առաջ:

5.3.Պայմանագիրը լուծելու մասին հայտարարությունն ստանալուց հետո 3ամսվա ընթացքում,Կողմերը պետք է բաժանեն ընդհանուր բաժնային սեփականություն համարվող գույքը եթե առկա է:

5.4.Սույն պայմանագիրը կարող է դադարել նաև որպես հետևանք Կողմերից որևէ մեկին՝

5.4.1 Անգործունակ, սահմանափակ գործունակ կամ անհայտ բացակայող ճանաչելու.

5.4.2.Մնանկ ճանաչելու.

5.4.3.Մահվան կամ սույն պայմանագրին մասնակցող իրավաբանական անձի լուծարվելու կամ վերակազմակերպվելու դեպքում:

6.Այլ պայմաններ

Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով,երկու օրինակից,որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

7.Կողմերի հասցեները բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Գործընկեր 1	**Գործընկեր 2**
"Կապիտալ Մոթորս" ՍՊԸ	« Դավան Գրուփ» ՍՊԸ
Հասցե՝ք. Երևան, Նալբանդյան 9 տնք 15	Հասցե՝ ք.Երևան, Ամիրյան 10 14
ՀՎՀՀ 02654035	ՀՎՀՀ՝ 00111826
"Արմսվիսբանկ" ՓԲԸ	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2500010423330100	Հ/Հ 1570013855560200
Տնօրեն՝ Գ.Նուրիջանյան	Տնօրեն՝ Ա.Հայրապետյան